

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ ՄՈՒՐԱԴԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳԵՆՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ ԿՈՄԻՏԵՆ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՇԱՏ ՎԱՅՐԵՐՈՒՄ
1896-1919 ԹԹ.

Է 00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ն. Հայրունի

Պաշտոնական ընդդիմախոսներ պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ս. Ստեփանյան

պ.գ.թ. Ա.Ռ. Միրզոյան

Առաջատար կազմակերպություն Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՎ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. նոյեմբերի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար պ.գ.թ. Ռ.Պ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Թեման արդիական է ինչպես համիդյան ու երիտթուրքական ժամանակաշրջանների և Հայոց ցեղասպանության, այնպես էլ հայ-գերմանական հարաբերությունների ու գերմանական հայանպաստ կազմակերպությունների պատմության ուսումնասիրության առումով: Ասվածը հատկապես կարևորվում է Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի համապատասխանատվության հարցի բնության տեսանկյունից: Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցի նախաշեմին մեծանունի կարևորությունն էլ ավելի ակնհայտ է դառնում:

Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի համապատասխանատվությունը հաշվի առնելով հանդերձ պետք է նշել, որ Հայաստանի օգնության գերմանական միության (այսուհետ՝ ՀՕԳՍ) Ֆրանկֆուրտի կոմիտեի աշխատակիցների դիրքորոշումն Օսմանյան կայսրության հայերի նկատմամբ էականորեն տարբերվում էր պաշտոնական Բեռլինի որդեգրած քաղաքականությունից: Թեմայի հետազոտությունը կարևոր է համիդյան և երիտթուրքական վարչակարգերի օրոք հայերի դեմ իրականացված բռնությունների, կոտորածների ու ցեղասպանության, միության կողմից հայերին ցուցաբերված օգնության, ինչպես հիմնված կայաններում, այնպես էլ դրանցից դուրս նրա ծավալած գործունեության մասին բազմաթիվ նոր փաստեր գիտական շրջանառության մեջ դնելու տեսանկյունից: Թեման արդիական է նաև նրանով, որ կարող է հակադրել բուրբակյան պատմագրության կողմից միսիոներների և այլ ակնատեսների հուշերն արժեզրկելու միտումներին, որտեղ դրանց հեղինակները մեղադրվում են կողմնապահության և թուրքատյացության մեջ:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել Հայաստանի օգնության գերմանական միության Ֆրանկֆուրտի կոմիտեի հիմնադրումը և գործունեությունն Օսմանյան կայսրությունում՝ ըստ կազմակերպության՝ հիմնական կայանների և աշխատանքային բնագավառների, ցույց տալ իրականացված աշխատանքների ինչպես դրական, այնպես էլ որոշ դեպքերում բացասական կողմերն ու հատկապես նրա ունեցած կարևոր դերը հայ որբերի խնամակալության գործում:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար աշխատության մեջ հետաճանաչվում ենք եղել հետևյալ խնդիրների պարզաբանմանը.

- Ներկայացնել Գերմանիայում հայանպաստ շարժման ձևավորման նախապատմությունը, նախադրյալները և հետագա ընթացքը:
- Լուսաբանել գերմանական միսիոներական շարժման սկզբնավորումն Օսմանյան կայսրությունում:
- Զննության ենթարկել ՀՕԳՍ Ֆրանկֆուրտի կոմիտեի՝ Օսմանյան կայսրությունում հիմնված կայանների աշխատանքը, առանձնացնել գործունեության ճյուղերը և զարգացման ընթացքը:

▪ Ի ցույց հանել գերմանական միսիոներական աշխատանքների առանձնահատկությունները որբերի հավաքման և խնամքի, տարրական կրթության և բժշկության բնագավառներում:

▪ Լուսաբանել Ֆրանկֆուրտի կոմիտեի գործունեության ամենախնդրահարույց ճյուղը՝ ավետարանականացումը: Նշել դրա հաջողությունների պատճառները, Հայ առաքելական եկեղեցու վերաբերմունքը դրա հանդեպ:

▪ Քննության ենթարկել միսիոներական կայաններում հավաքված երեխաների՝ ինքնուրույն կյանք մուտք գործելուն ուղղված միջոցառումները:

▪ Վերլուծել Մեծ եղեռնի տարիներին կայաններում տարվող աշխատանքները:

▪ Անդրադառնալ հայանպաստ գործունեության ընթացքում Ֆրանկֆուրտի կոմիտեի կրած կորուստներին:

▪ Պարզաբանել գերմանական միսիոներական աշխատանքների դադարեցման պատճառները և Աշխարհամարտը վերապրած կայանների հետագա ճակատագիրը:

▪ Քննության ենթարկել գերմանական միսիոներական կայանների դերը հայերի փրկության ու պահպանության գործում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Աշխատանքի ժամանակագրական շրջանակները ներառում են 1896-1919 թթ. ժամանակահատվածը: 1896 թ. հիմնադրվում է ՀՕԳ-ը և սկսում հայանպաստ աշխատանքներ իրականացնել ինչպես Գերմանիայում, այնպես էլ Օսմանյան կայսրությունում: Ատենախոսության մեջ հետազոտվող իրադարձություններն ավարտվում են 1919 թ., որն Օսմանյան կայսրությունից գերմանական օգնության կազմակերպությունների և միսիոներների արտաքսման տարին է, այսինքն այդ թվականին ընդհատվում է գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում է ՀՕԳ-ի հիմնական կառույցներից մեկը հանդիսացող Ֆրանկֆուրտի կոմիտեի (հետագայում դրա հիման վրա ստեղծվում է Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միությունը (այսուհետ՝ ԱԲԲԳՕՄ, որը ՀՕԳ-ի իրավահաջորդն էր) գործունեությունն Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում: Եթե ՀՕԳ-ի Բեռլինի կոմիտեի և նրա առաջնորդ Յոհաննես Լեփսիուսի գործունեությունը բավականաչափ լուսաբանված են, ապա ինչպես Գերմանիայում հայանպաստ շարժման սկզբնավորման, խթանման և հետագա զարգացման, այնպես էլ Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում ծավալված փրկարար աշխատանքների հարցում ոչ պակաս կարևոր դեր խաղացած Ֆրանկֆուրտի կոմիտեի և նրա հիմնադիր Էռնստ Լոնմանի գործունեության պատմությունը դեռ գիտական լուսաբանման չի ենթարկվել:

Աշխատանքում անդրադարձ է կատարվում կազմակերպության հիմնական կայաններին, որոնք գտնվում էին Մեգիդեում, Մարաշում, Վանում, Մուշում և

Հարունիեում: Դրանցից գատ կային նաև մի շարք ենթակայաններ Կ.Պոլսում (սկզբնապես ասիական մասում՝ Սկյուտար թաղամասում, ապա եվրոպականում՝ Բերեքում), Ամասիայի մոտ (Աթաբեյ անվամբ վայրում), Բալուում, Մալաթիայում, Չեյրունում, Արաբկիրում և մի շարք այլ վայրերում, սակայն, ելնելով ատենախոսության ծավալային սահմանափակումից և այն հանգամանքից, որ հիմնական հինգ կայաններում էր խնամվում երեխաների ճնշող մեծամասնությունը, ատենախոսությունում գերազանցապես քննության է ենթարկվում դրանց գործունեությանը: Բացառություն է կազմում միայն հավելվածում ներկայացված Հալեպի ենթակայանը, որը ցեղասպանության տարիներին ստեղծված միակ ենթակայանն էր և այն էլ այն դեպքում, երբ մյուս ենթակայաններն ու հիմնական կայաններից երկուսն արդեն 1915 թ. ամռանը դադարեցրել էին իրենց գոյությունը:

Ատենախոսության մեջ օգտագործվել են մինչ այժմ գիտական շրջանառության մեջ չդրված գերմանական և հայկական մեծաքանակ արխիվային փաստաթղթեր ու այլ սկզբնաղբյուրներ: Հետազոտության մեջ, ըստ անհրաժեշտության, օգտագործվել են նաև եվրոպացի հեղինակների՝ Գերմանիայի նոր շրջանի պատմությանը վերաբերող ուսումնասիրությունները, որոնց մեծ մասն առաջին անգամ է ներկայացվում հայերեն լեզվով, և որոնք որոշակիորեն արժևորվում են նաև հայագիտության համար:

Հանգամանալից քննության է ենթարկվել Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում ամենամեծ որբանոցային ցանցն ունեցող գերմանական միության գործունեությունը, ինչը մինչ այժմ չէր արվել: Լուսաբանվել են կազմակերպության աշխատանքներն ըստ հիմնական ճյուղերի: Ուսումնասիրվել է կազմակերպության կայանների պատմությունը, որոնք կարողացել են կանգուն մնալ Աշխարհամարտի ու ցեղասպանության տարիներին, ինչի շնորհիվ զգալի թվով հայեր կարողացել են փրկվել: Անդրադարձ է կատարվել նաև գերմանական կայանների փակմանը կամ փոխանցմանն ամերիկացիներին և դրանց պատճառներին:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը և եզրահանգումները կարող են օգտակար լինել Հայոց ցեղասպանության, Օսմանյան կայսրության, գերմանա-հայկական հարաբերությունների, Գերմանիայում հայանպաստ շարժման ձևավորման և ընթացքի, ինչպես նաև գերմանական միսիոներական գործունեության պատմության ուսումնասիրության համար: Աշխատանքի հիմնական բովանդակությունը և եզրակացությունները կարող են կիրառվել նաև դասախոսություններում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության շարադրման համար կիրառվել են պատմանկարագրողական, ինչպես նաև պատմահամեմատական ու պատմաքննական մեթոդները: Աշխատանքի մեթոդաբանական հիմքում ընկած է արխիվային փաստաթղթերի, հուշագրությունների, օրագրերի և ժամանակի գերմանական մամուլի՝ իբրև սկզբնաղբյուրների համեմատական և բովանդակային հետազոտությունը, ինչը

լրացվում է երկրորդական աղբյուրների ուսումնասիրմամբ: Շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է ինչպես ժամանակագրական, այնպես էլ թեմատիկ սկզբունքներով: Այս ամենի շնորհիվ հնարավոր է եղել ամբողջացնել վերոնշյալ հայանպաստ կազմակերպության հիմնադրումը, գործունեությունն ու աշխատանքներն Օսմանյան կայսրությունում, բացահայտել նրա աշխատանքների ինչպես դրական, այնպես էլ որոշ չափով նաև բացասական արդյունքները:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել է պաշտոնական հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնում: Դրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն: Ատենախոսությունը գրվել է հայերեն, գերմաներեն, անգլերեն, թուրքերեն և ռուսերեն մեծաքանակ սկզբնաղբյուրների և այլ գրականության հիման վրա: Դրանց շարքում առաջին հերթին պետք է առանձնացնել ինչպես հայկական, այնպես էլ գերմանական արխիվային փաստաթղթերը, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և ՀՕԳՄ Ֆրանկֆուրտի կոմիտեի (այժմ՝ Քրիստոնեական բարեգործություն արևելքում՝ ԶԲԱ) արխիվներում:

Առաջնային աղբյուրների թվին է պատկանում նաև աշխատանքում առատորեն օգտագործված՝ ՀՕԳՄ Ֆրանկֆուրտի կոմիտեի պարբերականը, որի առաջին համարը կրում էր «Հավաստի ծանուցումներ Արևելքից»¹ անվանումը, իսկ երկրորդից սկսած՝ այն կոչվում էր «Ճանուցումներ Արևելքից»² 1905 թ. ամսաթերթը վերանվանվում է «Արևածագ»³ Այստեղ պարբերաբար լույս են տեսել կազմակերպության աշխատանքների մասին զեկույցներ, միսիոներների հաղորդագրություններ, հաշվետվություններ, կայանների մասին տեղեկություններ և այլն: Ամսաթերթն ակտիվ է եղել նաև Կիլիկիայի կոտորածներին հաջորդող ժամանակահատվածում՝ մանրամասն նկարագրելով միսիոներների ապրումները, նրանց տեսածն ու ձեռնարկած միջոցառումները: Ցեղասպանության առաջին ամիսներին դրա վերաբերյալ որոշ նյութեր, նկարագրություններ հասցնում են տեղ գտնել պարբերականում, սակայն 1915 թ. նոյեմբերից գրաքննության հարուցած արգելքների պատճառով դադարում են տեղեկություններ տպագրվել Օսմանյան կայսրությունում հայերի տարագրության, կոտորածների և այլ ոճրագործությունների մասին: Այդ ժամանակահատվածում պարբերականում սկսվում է տպագրվել «չեզոք» տեղեկատվություն՝ Հայաստանի, Հայ Առաքելական

¹ Vertrauliche Mitteilungen aus dem Orient, Frankfurt am Main, Oktober 1898.

² Mitteilungen aus dem Orient, Frankfurt am Main, 1898-1905.

³ Sonnen-Aufgang, Frankfurt am Main, 1905-1923.

եկեղեցու պատմության, Հայկական հարցի, Արևմտյան Հայաստանի առանձին բնակավայրերի մասին՝ այդպիսով փորձելով «արքուն պահել» հայկական թեման:

Սկզբնաղբյուր հանդիսացող պարբերականների շարքում պետք է առանձնացնել նաև «Գերմանական արևելյան առաքելություն» կազմակերպության «Քրիստոնյա Արևելք»⁴ և «Արևելք»⁵ պարբերականները:

Առաջնային գրականության թվին են պատկանում նաև աշխատանքում օգտագործված փաստաթղթերի և նյութերի ժողովածուները, տեղեկագրերը, որոնց շարքում կարելի է առանձնացնել Յոհանես Լեփսիուսի կազմած դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն,⁶ ուր տեղ են գտել նաև միսիոներների զեկույցներ, ինչպես նաև Յակովբոս Տաշյանի,⁷ Սկրտիչ Ներսիսյանի,⁸ Վարդգես Միքայելյանի⁹ և Վոլֆգանգ Գուստի¹⁰ խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի ժողովածուները:

Հայալեզու գրականության շարքում կարևոր նշանակություն ունի Գևորգ Մելիք-Կարապետյանի «Գերմանական օգնության ընկերությունները Տաճկահայաստանի համար»¹¹ հետազոտությունը: Աշխատության մեջ անդրադարձ է կատարվում ՀՕԳՄ-ի ստեղծմանը և վաղ շրջանում հիմնված նրա կայաններին: Գ. Մելիք-Կարապետյանն իր հետազոտությունը կատարել է 1899 թ. և անդրադարձել միայն ՀՕԳՄ-ի առաջին տարիների աշխատանքներին: Հեղինակը նաև անձնական շփումներ է ունեցել կազմակերպության ակունքներում կանգնած անձնավորությունների հետ՝ դրանք արտացոլելով իր աշխատության մեջ:

Արևմտահայ իրականության մեջ որոշ հեղինակներ անդրադարձել են առանձին կայանների գործունեությանը: Նրանցից ոմանք, ինչպես օրինակ Բենիամին Ժամկոչյանը, Հայկ Արամյանը, Գրիգոր Խայիկյանը և այլք եղել են

⁴ Der Christliche Orient, Berlin, 1897.

⁵ Der Orient, Potsdam, 1925.

⁶ Lepsius Joh. (Hg.), Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Bremen, 1986.

⁷ Տաշեան Յ., Հայ ազգի տարագրությունը գերմանական վաերագիրներու համեմատ, Ազգային մատենադարան, Հատոր ԾԼԶ, Մաս Ա, Վիեննա, 1921:

⁸ Нерсисян М. (Ред.), Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов, Ереван, 1982.

⁹ Микаелян В. (Отв. ред.), Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Новые документы. Ереван, 1995.

¹⁰ Gust W. (Hg.), Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtiges Amtes, Springe, 2005.

¹¹ Մելիք-Կարապետյան Գ., Գերմանական օգնության ընկերությունները Տաճկահայաստանի համար, հետազոտություն, Թիֆլիս, 1901:

գերմանական որբանոցների սաներ: Բ. Ժամկոչյանի¹² աշխատությունն, ընդհանրապես, Սեզիբի կայանի պատմությանը վերաբերող բազմակողմանի աշխատություն է: Այստեղ նա անդրադառնում է ինչպես կայանի պատմությանը, այնպես էլ գերմանացի միսիոներներին ուղղված զանազան մեղադրանքներին՝ դրանց հանդեպ ցուցաբերելով քննադատական մոտեցում: Սեզիբի կայանի աշխատանքներին վերաբերող գրուխներ կան նաև Վահե Հայկի¹³ կազմած աշխատության մեջ: Պետք է նշել, որ այդ գրքում միևնույն հարցի շուրջ հաճախ առկա են իրար հակասող մոտեցումներ: Դա պայմանավորված է առանձին գրուխների՝ տարբեր անձանց կողմից գրված լինելով և հատկապես այն հանգամանքը, թե հեղինակները ժամանակին ինչպիսի առնչություններ են ունեցել գերմանական որբանոցի հետ հեղինակների առնչություններով: Սեզիբի կայանի գործունեությանը որոշ չափով անդրադառնում է նաև Մանուկ Դիզմեճյանը:¹⁴

ԱԶԲԳՕՄ Մարաշի կայանի վերաբերյալ զգալի տեղեկատվություն է բովանդակում Գրիգոր Գալուստյանի¹⁵ աշխատությունը:

Կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեն աշխատակիցների հուշագրությունները, որոնց մի մասը ժամանակի ընթացքում թարգմանվել են նաև հայերեն: Դրանցում հեղինակները գերազանցապես անդրադառնում են իրենց գործունեությանը, ապրումներին, ցեղասպանության ժամանակ տեղի ունեցած բռնություններին ու կոտորածներին: Հայերեն թարգմանված մեծան աշխատություններից կարելի է առանձնացնել Խարբերդի միսիոներուի Մարիա Յակոբսենի օրագիրը,¹⁶ Մուշի կայանի աշխատակից և դրա վերջին օրերի ակնատես Ալմա Յոհանսոնի հուշերը,¹⁷ Մարաշում, ապա նաև Հայեպում ակտիվ գործունեություն ծավալած Բեատրիցե Ռոնների գրառումները¹⁸ և այլն:

Սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող օտարալեզու գրականության շարքում պետք է առանձնացնել ԱԶԲԳՕՄ գործադիր տնօրեն և գանձապահ Ֆ.

¹² Ժամկոչյան Բ., Պատմություն Մամիլիեթ իլ Ազիզի գերման որբանոցներու, Պէյրուք, 1973:

¹³ Հայկ (Տինճեան) Վ. (կազմ.), Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը: Յուշամատենան պատմական, մշակութային և ազգագրական, Նիւ Եորք, 1959:

¹⁴ Դիզմեճեան Մ., Խարբերդ և իր զավակները, Ֆրէզկոյ, 1955:

¹⁵ Գալուստեան Գ.ր., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Չեյթուն, Նիւ Եորք, 1934:

¹⁶ Մարիա Դէյքըպըն (Եագոպըն), Օրագրութիւն 1907-1919 Խարբերդ: (Թարգմանությունը դանիերենից՝ Ներսէս Եպս. Բախտիկեան, Սիիրան Սիմոնեան), Անթիլիաս, Լիբանան, 1979:

¹⁷ Յոհանսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, 2008թ., 148 էջ: Յոհանսոն Ա., Մուշ 1915. օրագիր: Թարգմանությունը՝ Տիգրանյան Ս., Լոս Անջելես, 2000:

¹⁸ Պէատրիս Ռոնըր, Տիրոջ փրկարար բազուկը, Հալէպ, 2001:

Շուխարդտի խմբագրությամբ լույս տեսած գիրքը,¹⁹ որը տարբեր կայաններում աշխատած միսիոներների գրառումների հավաքածու է և հրատարակվել է կազմակերպության հիմնադրման քսանհինգամյակի առթիվ: Մեկ այլ կարևոր սկզբնաղբյուր է Մայնի Ֆրանկֆուրտում 1899 թ. հրատարակված գիրքը,²⁰ որում հարուստ տեղեկություններ կան առանձին կայաններում և ենթակայաններում կազմակերպության աշխատանքների, Էռնստ Լոհմանի Արևելք կատարած առաջին այցի մանրամասների և նրա տպավորությունների մասին:

Սկզբնաղբյուրային մեծ նշանակություն ունեցող նյութերի շարքում առանձնահատուկ կարևորություն ունեն ՀՕԳՄ Ֆրանկֆուրտի կոմիտեի արխիվում պահվող արժեքավոր նյութերը (արխիվի զգալի մասը, ցավոք, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ոչնչացվել է): Դրանց թվում առաջին հերթին պետք է նշել Ֆրանկֆուրտի կոմիտեի միսիոներների «վարքականոց-պայմանագիրը»:²¹ Առաջնային գրականության շարքում կարևորվում են նաև Յոհաննես Լեփսիուսի՝ «Հայաստանը և Եվրոպան»²² և «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին»²³ աշխատությունները: Էռնստ Լոհմանն իր աշխատանքների, Գերմանիայում հայանպաստ շարժման սկզբնավորման ու դրա դժվարությունների, Արևմտյան Հայաստան կատարած այցերի և այլ իրադարձությունների վերաբերող մեծաքանակ տեղեկություններ է ամփոփել իր ինքնակենսագրականում:²⁴ Վանի կայանի վերջին օրերի, աշխատակիցների հեռանալու, գերեվարվելու և կրած զրկանքների մասին է պատմում Վանի կայանի միսիոներուի Կեթե Էրիտուրը:²⁵

Կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն ունի Խարբերդի ամերիկյան կայանի երկարամյա միսիոներ և «Եփրատ» քոլեջի տնօրեն Հենրի Ռիզսի հուշագիրը, որտեղ արժեքավոր տեղեկություններ ենք գտնում 1915-1917 թթ.

¹⁹ Schuchardt F. (Hg.), 25 Jahre im Orient: 1896-1921. Ein Gang durch die Arbeit des Deutschen Hilfsbundes für Christliches Liebeswerk im Orient, Frankfurt am Main, 1921.

²⁰ Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient e.V. (Hg.), Skizzen und Bilder aus dem Orient, Dinglingen (Baden), 1899.

²¹ Bestimmungen für die vom Deutschen Hilfsbund für christliches Liebeswerk im Orient auszusendeten Geschwister, Frankfurt a. Main.

²² Lepsius Joh., Armenien und Europa. Eine Anklageschrift wider der christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, Berlin, 1896.

²³ Lepsius Joh., Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.

²⁴ Lohman E., Nur ein Leben, Schwerin, 1933.

²⁵ Ehrhold K., Flucht in die Heimat. Aus dem Kriegserleben deutscher Missionsschwester in der asiatischen Türkei, Dresden-Leipzig, 1937.

Խարբերում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:²⁶ Ատենախոսության մեջ օգտագործված ռուսալեզու գրականության մեջ մեզ համար առավել կարևորվել է Հենրի Լինչի ճանապարհորդական գրառումների հիման վրա հրատարակված ստեղծված աշխատությունը:²⁷

ժամանակակից հեղինակներից պետք է առանձնացնել Աշոտ Հայրունու հիմնարար աշխատությունը, որում հեղինակն անդրադառնում է գերմանական միսիոներական գործունեության սկզբնավորմանը, «Գերմանական արևելյան առաքելության», դրա առաջնորդ, Գերմանիայում հայանպաստ շարժման թերևս ամենաակաճառ գործիչ Յոհ. Լեփսիուսի գործունեությանը, Պարսկաստանում, Բուլղարիայում և Օսմանյան կայսրությունում նրա ծավալված որբախնամ աշխատանքներին:²⁸

Միյուրբահայ գրողներից հիշատակության է արժանի Լիպարիտ Ազատյանի²⁹ հայ որբերին նվիրված եռահատորյակը, որի հատկապես երրորդ գրքում տեղեկություններ ենք գտնում գերմանական խնամատարության ներքո եղած կայանների և դրանցում խնամվող որբերի մասին:

Որոշ հայ հեղինակներ անդրադարձել են առանձին միսիոներների գործունեությանը: Նրանց թվում նախ պետք է նշել Վարդան Գրիգորյանի՝ ԱԶԲԳՕՄ աշխատակցուհի Հեղվիգ Բյուլիս նվիրված աշխատանքը:³⁰

Օգտագործված գրականության մեջ առանձին տեղ են գրավում գերմանական միսիոներական կազմակերպությունների հիմնադիրների մասին գրված աշխատությունները: Դրանց շարքում կարելի է առանձնացնել Թեոդոր Բրանդտի՝ Է. Լոհմանին նվիրված աշխատությունը,³¹ Յոհ. Լեփսիուսի կյանքի, աստվածաբանական, միսիոներական աշխարհայացքի, Գերմանական ավետարանական եկեղեցու համար նրա ունեցած կարևոր դերի մասին ԶԲԱ ներկայիս տնօրեն Անդրեաս Բաումանի երկու աշխատությունները,³² Մարտին

Կնիպսելի կազմած՝ Է. Լոհմանն վերաբերող հոդվածների ժողովածուն,³³ Կույրերի առաքելության առաջնորդ Էռնստ Յակոբ Քրիստոֆելի կյանքի, գործունեության և առաքելության մասին Սաքինե Թյունեի գիրքը³⁴ և այլն:

Գերմանիայում հայանպաստ ավետարանական շարժման սկզբնավորմանը, դրա ընթացքին ու ձեռքբերումներին է անդրադառնում Ուվե Ֆայգելը:³⁵ Արսել Մայսները լուսաբանում է հայանպաստ շարժման մեջ մեծ դերակատարում ունեցած «Քրիստոնյա աշխարհ» պարբերականի հրատարակումները և դրա խմբագիր ու շարժման ակտիվիստ Մարտին Ռադեի գործունեությունը:³⁶

ժամանակակից եվրոպացի հեղինակների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում հատկապես շվեյցարաբնակ Հանս-Լուկաս Կիզերը, ով մի քանի արժեքավոր աշխատությունների հեղինակ է: Դրանցից առաջին հերթին պետք է առանձնացնել Ուրֆայի, Խարբերդի և Վանի շրջաններում ծավալված միսիոներական գործունեությանը և այլ հարակից խնդիրների վերաբերող գիրքը:³⁷

Հ.-Լ. Կիզերը հեղինակել է նաև Շվեյցարիայի ու Հայկական հարցի, հայանպաստ շարժման սկզբնավորման ու ընթացքի, շվեյցարական օգնության և այլ նմանատիպ հարցերին վերաբերող մի ծավալուն աշխատություն ևս:³⁸ Նրա խմբագրությամբ վերահրատարակվել են Բեռլինի կոմիտեի Ուրֆայի կայանի աշխատակից Յակոբ Կյունցլերի հուշերը:³⁹ Հայոց ցեղասպանությանը, Շվեյցարիայի դիրքորոշմանն ու արձագանքին, հայերին ցուցաբերված շվեյցարական օգնությանն անդրադարձ է կատարվում նաև նրա մեկ այլ գրքում:⁴⁰

Վերջին տասնամյակներում հրատարակված գրականության շարքում որոշակիորեն կարևորվում են նաև ՀՕԳՄ հիմնադրման 100 ամյակին նվիրված

²⁶ Riggs H., Days of Tragedy in Armenia. Personal Experiences in Harpoot, 1915-1917, Ann Arbor, Michigan, 1997.

²⁷ Линч Х., Армения. Путевые очерки и эпюды, Тифлис, 1910.

²⁸ Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002: Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուս: Հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, Երևան, 2001:

²⁹ Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, գիրք երրորդ, Լոս Անճելես, 2002:

³⁰ Գրիգորյան Վ., Հայությանը նվիրված կյանք. Էստոնուհի Հեղվիգ Բյուլիսի հայանպաստ գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում (1911-1951 թթ.), Երևան, 1996:

³¹ Brandt T., Ernst Lohmann. Ein Pionier in Jesu Dienst, Giessen und Basel, 1962.

³² Baumann A., Der Orient für Christus: Johannes Lepsius-Biographie und Missiologie, Gießen, 2007. Baumann A. (Hg.), Johannes Lepsius. Die Wiedergeburt des Orients: Texte zur Mission, Nürnberg, 2008.

³³ Knipsel M (Hg.), Ernst Lohmann 1860-1936. Pionier, Gründer, Evangelist, Berlin, 2011.

³⁴ Thüne S., Ernst Jakob Christoffel. Ein Leben im Dienst Jesu, Nürnberg, 2007.

³⁵ Feigel U., Das evangelische Deutschland und Armenien: Die Armenierhilfe deutscher evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der deutsch-türkischen Beziehungen, Göttingen, 1989.

³⁶ Meißner A., Martin Rades "Christliche Welt" und Armenien, Münster, 2010.

³⁷ Kieser H.-L., Der verpasste Friede. Mission, Ethnie und Staat in den Ostprovinzen der Türkei 1839-1938, Zürich, 2000.

³⁸ Kieser H.-L. (Hg.), Die Armenische Frage und die Schweiz (1896-1923), Zürich, 1999.

³⁹ Kieser H.-L. (Hg.), Jakob Künzler. Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918), Zürich, 1999.

⁴⁰ Arbeitskreis Armenien (Hg.), Völkermord und Verdrängung. Der Genozid an den Armeniern - die Schweiz und die Schoah, Zürich, 1998.

գրքույկը,⁴¹ ԶԲԱ նախորդ գործադիր տնօրեն Բրունո Բլազերի երկու՝ դեռևս անտիպ գործերը,⁴² ինչպես նաև Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական և շվեյցարական կազմակերպությունների պատմությանը վերաբերող երկհատորյակը:⁴³

Թուրք հեղինակ Շամիլ Մուրլուն իր գրքում անդրադառնում Մեզիրեի գերմանական դպրոցներին, թվարկում դրանց գտնվելու վայրերն՝ ըստ թաղամասերի, ինչպես նաև դրանցում դասավանդվող առարկաները:⁴⁴ Օսմանյան կայսրությունում գերմանական միսիոներների «ներկայացվածության» վերաբերյալ որոշ տեղեկություններ է հաղորդում Իլբեր Օրթայլի աշխատությունը:⁴⁵

Ատենախոսության մեջ օգտագործված անգլալեզու գրականությունից կարելի է առանձնացնել Ռոբերտ Դենիելի աշխատանքը, որտեղ արժեքավոր տեղեկություններ ենք գտնում ինչպես ամերիկյան միսիոներների, այնպես էլ նրանց կողմից հիմնադրված ավետարանական եկեղեցիների, դպրոցների, դրանց թվակազմի մասին, ինչը հնարավորություն է տալիս համեմատություններ անցկացնել գերմանական առաքելական գործունեության հետ:⁴⁶ Յուլիուս Ռիխտերն իր գրքում նկարագրում է Մերձավոր Արևելքում բողոքական առաքելությունների պատմությունը:⁴⁷ Մարաշի կայանի, հատկապես նրա գոյության վերջին տարիների, կայանի անձնակազմի և երեխաների փախուստի մասին կարևոր տեղեկություններ է պարունակում Սթենլի Էլֆինսթոն Զերի գիրքը:⁴⁸

⁴¹ Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient e.V. (Hg.), Handelt bis ich wiederkomme: 100 Jahre Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient e.V., Bad Homburg, 1996.

⁴² Blaser B., 110 Jahre Deutscher Hilfsbund im Orient 1896- Ende 2006. Unveröffentlichte Zusammenstellung, Bad Homburg, 2006. Blaser B., Pastor Enst Lohmann und der Christliche Hilfsbund im Orient. Unveröffentlichte biographische Quellensammlung, Bad Homburg, 2009.

⁴³ Zur Geschichte des „Deutschen und Schweizer Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient“, 1896-1944, Teil I. Zur Geschichte des „Deutschen und Schweizer Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient“ 1944-1982, Teil II.

⁴⁴ Mutlu Ş., Osmanlı Devleti'nde Misyoner okulları, İstanbul 2005.

⁴⁵ Ortaylı I., İkinci Abdülhamit döneminde Osmanlı İmparatorluğu'nda Alman nüfuzu, Ankara, 1981.

⁴⁶ Daniel R., American Philanthropy in the Near East 1820-1960, Athens, Ohio, 1970.

⁴⁷ Richter J., A History of Protestant Missions in the Near East, New York, 1970.

⁴⁸ Stanley E. K., The Lions of Marash. Personal Experiences with American Near East Relief 1919-1922, New York, 1973.

Աշխատանքի համար օգտակար են եղել նաև Վահագն Դադրյանի,⁴⁹ Նիկոլայ Հովհաննիսյանի,⁵⁰ Վահան Բաբրուրյանի,⁵¹ Ռուբեն Սաֆրաստյանի,⁵² Գևորգ Ղարիբջանյանի,⁵³ Ջոն Կիրակոսյանի,⁵⁴ Հասմիկ Ստեփանյանի,⁵⁵ Արսեն Ավագյանի,⁵⁶ Հրաչիկ Միմոնյանի,⁵⁷ Միմոն Փայասյանի,⁵⁸ Բյուզանդ Եղիայանի⁵⁹ և այլոց աշխատությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:
Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածություն մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նշված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, կիրառական նշանակությունը, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, աշխատանքի

⁴⁹ Дадрян В., История Армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007. Dadrian V., The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence/Oxford, 1995. Dadrian V., German Responsibility in the Armenian Genocide: a Review of the Historical Evidence of German complicity, Cambridge, 1996.

⁵⁰ Հովհաննիսյան Ն., Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010: Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանություն: Հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն (աշխարհի տասը լեզուներով), Երևան, 2009:

⁵¹ Բաբրուրյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989:

⁵² Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009:

⁵³ Ղարիբջանյան Գ., Գերմանիան, Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը (1878-1918 թթ.), Երևան, 2001:

⁵⁴ Киракосян Дж., Великобритания и Армянский вопрос 90-е годы XIX века, Ереван, 1990.

⁵⁵ Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2011:

⁵⁶ Avagyan A., Osmanlı İmparatorluğu ve kemalist Türkiye'nin devlet-iktidar sisteminde Çerkesler, (XIX yüzyılın ilk yarısından XX yüzyılın ilk çeyreğine), İstanbul, 2004. Авакян А., Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013.

⁵⁷ Միմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009:

⁵⁸ Payaslian S., United States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide, New York, 2005.

⁵⁹ Եղիայան Բ. (խմբ.), Առանայի հայոց պատմություն, Անթիլիաս, 1970:

պատրաստման համար կիրառված մեթոդաբանությունը, տրվում է աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առեւախոսության առաջին՝ «Հայնպատ շարժման սկզբնավորումը Գերմանիայում: Հայաստանի օգնության գերմանական միության կազմավորումն ու տրոհումը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից՝ «Գերմանա-թուրքական հարաբերությունները 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին», «Համիդյան կոտորածների վերաբերյալ լուրերի ներթափանցումը Գերմանիա», «Հայաստանի օգնության գերմանական միության հիմնադրումն ու տրոհումը» և «Ֆրանկֆուրտի կոմիտեի համագործակցությունն այլ առաքելությունների հետ»:

Առաջին ենթագլխում ներկայացվում են գերմանա-թուրքական հարաբերությունները 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, ինչպես նաև Գերմանիայի հարաճուն ազդեցությունը Օսմանյան կայսրության քաղաքական, ռազմական, տնտեսական և ֆինանսական բնագավառներում:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում է համիդյան կոտորածների վերաբերյալ առաջին լուրերի ներթափանցումը Գերմանիա: Այստեղ հանգամանորեն խոսվում է նաև որոշ պարբերականների ու անհատների մասին, որոնք մեծ ներդրում են ունեցել կոտորածների վերաբերյալ հավաստի տեղեկությունները շրջանառության մեջ դնելու և հայանպատ շարժման ձևավորման գործում: Ներկայացվում է նաև Գերմանիայում հայերին օգնելու առաջին կոչն՝ արված ՀՕԳՄ համահիմնադիր և վերջինիս Ֆրանկֆուրտի կոմիտեի ղեկավար Էռնստ Լոհմանի կողմից: 1895 թ. վերջերին համիդյան կոտորածների մասին ամերիկյան մամուլից տեղեկացած Է. Լոհմանը համակիրների հետ 1896 թ. հունվար-փետրվար ամիսներին նախաձեռնում է հայանպատ առաջին միջոցառումները:

Երրորդ ենթագլխում շարադրված է 1896 թ. ՀՕԳՄ հիմնադրումը, դրա կառուցվածքն ու աշխատանքների սկիզբը: Այստեղ հանգամանորեն խոսվում է նաև ինչպես ՀՕԳՄ տրոհման և դրա հնարավոր պատճառների, այնպես էլ Ֆրանկֆուրտի կոմիտեի հիման վրա ստեղծված ու ՀՕԳՄ իրավահաջորդ ԱԲԲԳՕՄ-ի գործունեության մասին:

Չորրորդ ենթագլխում խոսվում է այլ առաքելությունների հետ ԱԲԲԳՕՄ համագործակցության մասին: Ելնելով դավանանքային ընդհանրություններից՝ ԱԲԲԳՕՄ-ը համագործակցել է ավետարանական կազմակերպությունների և առաքելությունների հետ: Դրանք թե՛ գերմանական կազմակերպություններ էին, ինչպես օրինակ Յոհաննես Լեփսիուսի ղեկավարած «Գերմանական արևելյան առաքելությունը», Էռնստ Յակոբ Բրիստոֆելի հիմնած «Բրիստոֆելի կույրերի առաքելությունը», Դիսելդորֆի ղեկավարած «Կայզերսվերթի գթության քույրերի տունը» և մի քանի ավելի փոքր միություններ, և թե՛ շվեյցարական, սկանդինավյան և ամերիկյան առաքելություններ: ԱԲԲԳՕՄ-ում իր հերթին աշխատում էին մեծ թվով օտարերկրացիներ Շվեյցարիայից, Սկանդինավյան երկրներից, Էստոնիայից, Հունաստանից:

Առեւախոսության երկրորդ գլուխը կրում է «Միության աշխատանքներն Օսմանյան կայսրությունում մինչև Առաջին աշխարհամարտը» վերնագիրը և բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլուխը կոչվում է «Հիմնական կայանների հիմնումն Օսմանյան կայսրությունում»: Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպանի հետ Ֆրանկֆուրտի կոմիտեի առաջին միսիոներների՝ Յոհ. Էհմանի, Մ. Յիմերի և Ֆ. Հեդլեի հանդիպման ժամանակ վերջիններիս՝ երկրի ներքին շրջաններ մեկնելու և համիդյան կոտորածներից տուժած հայերին օգնություն ցույց տալու մտադրությունները դեսպանի կողմից անվանվում են «անմիտ ձեռնարկ», իսկ միսիոներներն ստիպված են լինում գրավոր կերպով հավաստել, որ իրենք միայն սեփական նախաձեռնությամբ են գործում և հրաժարվում են դեսպանության որևէ աջակցությունից: Սա էլ, կարծես թե, բնորոշում է աշխատանքների հետագա ընթացքը. ՀՕԳՄ Ֆրանկֆուրտի կոմիտեն չէր կարող ապավինել գերմանական դիվանագիտական աջակցությանը, թեև հետագայում, այնուամենայնիվ, նրա անդամների գերմանացի լինելու հանգամանքը որոշ դեպքերում խաղում է իր վճռական դերը: Այնուհետև նկարագրվում է հիմնական կայանների հիմնումը Մեզլիեում, Մարաշում, Վանում, Մուշում և Հարունիեում, ինչպես նաև աշխատանքների ընթացքը: Եթե սկզբնապես կայաններում խնամվում էր մոտ 150-200 երեխա, ապա Աշխարհամարտից առաջ նրանց թիվը հասնում է 2000-ի: Կայանների հիմնադրումից ի վեր որբանոցներում խնամվել էին հազարավոր երեխաներ:

Երկրորդ՝ «Որբախնամությունը, կրթությունը և արհեստները կայաններում 1896-1913 թթ.» ենթագլխում անդրադարձ է կատարվում ինչպես կայաններում հիմնված որբանոցներին, այնպես էլ կրթությանն ու արհեստների ուսուցանմանը: Գերմանական որբանոցների առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ յուրաքանչյուր երեխա առնվազն տարրական կրթություն էր ստանում: Գերմաներենի ուսուցման մակարդակը բարձր է եղել հատկապես Մարաշի և Հարունիեի կայաններում՝ պայմանավորված Բադդադի երկաթուղու և Հալեպի գերմանական ռեալական դպրոցի մերձավորությամբ: Բացի այդ, կայաններից դուրս՝ մի շարք այլ բնակավայրերում ևս կայանների աշխատակիցների ջանքերով դպրոցներ էին հիմնվում (միայն Վանի կայանի ջանքերով շրջակա բնակավայրերում հիմնվել էր 18 տարրական դպրոց): Ժամանակի ընթացքում հիմնվում են նաև ավելի բարձր մակարդակի կրթական հաստատություններ, ինչպես, օրինակ, ուսուցիչների պատրաստման սեմինարիան և «Թաղեուսյան» վարժարանը՝ Մեզլիեում ու Կանանց աստվածաշնչյան դպրոցը՝ Մարաշում: Առանձին դեպքերում որոշ սաներ իրենց կրթությունն էին շարունակում Գերմանիայում: Երիտթուրքական հեղաշրջումից հետո Մեզլիեի կայանում սկսում է տպագրվել «Ամենուրև համար» պարբերականը: Կրթությունից գատ՝ ավագ տարիքի երեխաները նաև արհեստներ էին սովորում:

Երրորդ՝ «Բժշկական գործը կայաններում մինչև Աշխարհամարտը» ենթագլխում ներկայացված են կայանների բժշկական և հիվանդախնամ աշխատանքները: Եթե սկզբնապես բուժօգնություն էր ցուցաբերվում

որբանոցներում դրա համար նախատեսված սենյակներում՝ համեստ պայմաններով, ապա տարիների ընթացքում հիմնվում են պոլիկլինիկաներ, դեղատներ, իսկ Սեզիբեում և Մարաշում՝ մեծ և ժամանակակից հիվանդանոցներ՝ «Եփրատ-Միլոսի» և «Սալեմ», որոնք ծառայում էին ոչ միայն կայաններին, այլև քաղաքի ու շրջակա բնակչությանը: Դրանց կից հիմնվում են նաև մանկաբարձության ու հիվանդախնամության դասընթացներ՝ առկա բացը լրացնելու համար: Վանի կայանում բժշկությունը մնում է ամերիկացիների մենաշնորհը: Մուշի կայանն այդպես էլ բժիշկ չի ունենում, թեև աշխատակիցների կողմից իրականացվում էին բուժօգնության աշխատանքներ: Հարունիեի կայանն անհրաժեշտության դեպքում դիմում էր Մարաշի կայանի օգնությանը: Այնուամենայնիվ, տարբեր պատճառներով կայաններում լինում են նաև զգալի թվով մահացություններ, որոնցից գերծ չեն մնում նաև աշխատակիցները:

Չորրորդ՝ «Ավետարանականացմանն ուղղված աշխատանքները կայաններում և դրանցից դուրս» ենթագլխում ներկայացվում է կայանների գործունեության, թերևս, միակ բացասական բնագավառը՝ ավետարանականացումը: Եթե սկզբնական շրջանում աշխատանքները գլխավորապես միտված էին կոտորածներից տուժած շրջաններում հայերին օգնություն ցուցաբերելուն, ապաստան տալուն, ապա ամրապնդվելու և ընդարձակվելու հետ մեկտեղ սկսում են ի հայտ գալ նաև ավետարանականացմանն ուղղված երևույթներ: Պետք է նշել, որ թեև որբերի, այրիների կամ աշխատակիցների ընդունումը կայաններ պայմանավորված չի եղել նրանց՝ ավետարանականություն ընդունելու հանգամանքով, սակայն, այնուամենայնիվ, տարիների ընթացքում աճել է ավետարանականների թիվը, իրականացվել են հոգևոր թեմաներով հավաքություններ, համատեղ աղոթքներ և այլն: Ակտիվ ավետարանական գործունեություն է ծավալվել հատկապես կայաններից դուրս: Այդ նպատակով կայանը համագործակցել է քարոզիչների հետ, իսկ Մարաշում կին քարոզիչների պատրաստման համար 1913 թ. դպրոց է հիմնվել:

Ատենախոսության **երրորդ** գլուխը կրում է «ԱԶԲԳՕՄ կայանները 1914-1919 թթ.:

Միության գործունեության դադարեցումն Օսմանյան կայսրությունում» վերնագիրը և բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Աշխարհամարտի և ցեղասպանության տարիներին կայաններում ծագած նոր խնդիրները» ենթագլխում խոսվում է ինչպես յուրաքանչյուր կայանի աշխատանքներին բնորոշ դժվարությունների, այնպես էլ բոլոր կայանների համար ընդհանուր դարձած այնպիսի քարոզությունների մասին, ինչպիսիք էին որբերի հավաքման և պահպանման, ֆինանսների առաքման, աշխատակազմի համալրման հետ կապված, ինչպես նաև գերմանացի զինվորների խնամքով, տղամարդկանց գորակոչով և հայ աշխատակիցների արքորով պայմանավորված այլ խնդիրները:

Երկրորդ՝ «Կայանների հայանպաստ գործունեությունը Հայոց ցեղասպանության տարիներին» ենթագլխում նկարագրվում է կայաններում տիրող իրավիճակը Աշխարհամարտի տարիներին և դրանից հետո: Հայ աշխատակիցներից ոմանք բռնում են արքորի ճամփան: Եթե մինչ այդ կայանների

համար բարգավաճման և ընդարձակման տարիներ էին, ապա Աշխարհամարտը, ապա նաև հայ բնակչության բռնագաղթն ու կոտորածը փոխում են առաջնահերթությունները. գլխավոր խնդիր է դառնում կայանների գոյության պահպանումը, հնարավորինս մեծ թվով որբերի և աշխատակիցների պատսպարումը: Եփրատյանների մի մասը «ռազմական նպատակներով» բռնագրավվում են բուրբակյան իշխանությունների կողմից:

Երրորդ՝ «Կայանների լուծարումը կամ փոխանցումն ամերիկացիներին» ենթագլխում խոսվում է կայաններում գերմանական գործունեության դադարեցման մասին: Վանի կայանը, գտնվելով ռուսական սահմանին մոտ, ամենից շուտ է ներքաշվում պատերազմական գործողությունների մեջ: Երեխաների մեծ մասն ուղարկվում են իրենց հարազատների կամ ազգականների մոտ: Կայանում ապաստան են գտնում շրջակա բնակավայրերից Վան փախած շուրջ 2000 հայեր: Ռուսական առաջին նահանջի ժամանակ հեռանում է նաև աշխատակիցների մի մասը: Երկրորդ նահանջի ժամանակ հեռանում են կայանում մնացած բոլոր երեխաները՝ ավելի քան 40 հոգի, աշխատակիցներից Կեթե Էրիհոլդի գլխավորությամբ: Բոլոր երեխաներն ու աշխատակիցները բարեհաջող ժամանում են Թիֆլիս, որտեղ աշխատակիցները բանտ են նետվում՝ որպես գերմանական գործակալներ: Հետագայում նրանք ամերիկյան դիվանագիտական աջակցությամբ ազատվում են և վերադառնում հայրենիք: Կայանը դադարեցնում է իր գոյությունը:

Մուշի կայանին բաժին է հասնում ամենադաժան ճակատագիրը. գրեթե բոլոր երեխաներն ու անձնակազմը, բացառությամբ մի քանի ուսուցչուհուց, սպանվում են թուրքերի կողմից: Այդ ուսուցչուհիներն ազատվում են միսիոներուհիների ջանքերով և նրանց հետ միասին տեղափոխվում Սեզիբեի կայան: 1915 թ. նոյեմբերին կայանի աշխատակիցներից Բ. Բյորնը վերադառնում է Մուշ՝ քաղաքում և շրջակայքում դեռևս ողջ մնացած հայերին որևէ կերպ օգնելու նպատակով: Նա վերջնականապես հեռանում է այդտեղից 1916 թ. սկզբին՝ ռուսների՝ Մուշ մուտք գործելուց առաջ:

Սեզիբեի, Մարաշի և Հարունիեի կայանները կարողանում են կանգուն մնալ Աշխարհամարտի տարիներին: Պատերազմի ավարտից հետո Սեզիբեի կայանը լծվում է նաև մուսուլմանական տներից հայ կանանց ու աղջիկների ազատագրման և խնամքի տակ վերցնելու գործին: Սեզիբեի կայանի շնորհիվ փրկվում է 1000-1500 մարդ: 1919 թ. կանգուն մնացած կայանների աշխատակիցները Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի պահանջով, որպես պատերազմում պարտված երկրի հպատակներ, ստիպված են լինում հեռանալ Օսմանյան կայսրությունից: Կայանները փոխանցվում են ամերիկյան միսիոներական առաքելությանը: Դրանցում որպես ներկայացուցիչներ թողնվում են ԱԶԲԳՕՄ ոչ գերմանացի աշխատակիցներ՝ կայանների փոխանցումն ամերիկացիներին ավելի սահուն կազմակերպելու նպատակով: 1919 թ. մյուս բոլոր աշխատակիցները հեռանում են Օսմանյան կայսրությունից: Մարաշի և Հարունիեի կայաններում դժվարությունները, սակայն, սրանով չեն ավարտվում. այս շրջանները դառնում են մի կողմից քեմալականների, մյուս կողմից՝ ֆրանսիական զորքերի ու Հայկական

լեզիոնի բախումների դաշտ, իսկ կայանների շինությունները հայտնվում են դրանց կիզակետում: Ամեն դեպքում այս երկու կայանների անձնակազմը և երեխաները կարողանում են փրկվել:

Հավելվածում ներկայացվել է կազմակերպության համահիմնադիր և նախագահ, Գերմանիայում հայանպաստ շարժման մեջ խիստ կարևոր դերակատարում ունեցած Է. Լոհմանի կյանքն ու գործունեությունը, նախապատերազմյան շրջանում Օսմանյան կայսրությունում Ֆրանկֆուրտի կոմիտեի կրթական աշխատանքների ցուցանիշները՝ աղյուսակի տեսքով, և պատերազմի տարիներին հիմնված միակ` Հալեպի ենթակայանի պատմությունը: Եթե ցեղասպանության նախօրեին և դրա ընթացքում փակվել էին բոլոր ենթակայանները, ապա, գլխավորապես Մարաշի կայանի աշխատակիցների ջանքերով և ամերիկյան ու շվեյցարական աջակցությամբ, նաև գերմանական սպայական միջամտությամբ Հալեպում ենթակայան է հիմնվում, որի նպատակն էր այս վայրերում բռնագաղթից հետո ի հայտ եկած հայ կանանց և հատկապես երեխաների գոնե մի չնչին մասի կարիքների մեղմումը, սնունդով ապահովումը: 1917 թ. այս ենթակայանը դադարեցնում է իր գոյությունը:

Ատենախոսությունում ներկայացված նյութերն առարկայական և ստույգ պատկերացում են տալիս վերոնշյալ ժամանակահատվածում Գերմանիայում հայանպաստ շարժման ձևավորման ու ՀՕԳՄ Ֆրանկֆուրտի կոմիտեի՝ Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում հիմնած կայանների ու դրանց գործունեության վերաբերյալ:

Ամփոփելով աշխատանքը և ի մի բերելով ուսումնասիրության հիմնական արդյունքները՝ կարելի է գալ հետևյալ **եզրակացությունների**:

- ՀՕԳՄ-ը և դրա ստեղծման ակունքներում կանգնած անձինք կարևոր դերակատարում են ունեցել Գերմանիայում 1896 թ. հայանպաստ շարժման սկզբնավորման և հետագա զարգացման գործում: Կազմակերպության ակունքներում կանգնած անձանց՝ Է. Լոհմանի և Յոհ. Լեփիուսի ու նրանց ղեկավարած կոմիտեների միջոցով են զարգացվում հայանպաստ աշխատանքները, որոնք չեն ստանում որևէ պետական-իշխանական աջակցություն: Հետագայում երկու հիմնական կոմիտեների և նրանց առաջնորդների միջև առաջացած գաղափարական ներհակությունները թեև հանգեցնում են կազմակերպության տրոհմանը, սակայն չեն խոչընդոտում նշված կոմիտեների հետագա ինքնուրույն ակտիվ աշխատանքներին:

- Եթե սկզբնապես երկու անգամ հայ որբեր են բերվում Կ.Պոլսից Գերմանիա՝ այստեղ խնամվելու նպատակով, ապա օգնության այս մեթոդը ՀՕԳՄ կողմից շուտով համարվում է ոչ նպատակահարմար, քանզի այդ կերպ երեխաները կտրվում էին իրենց բնօրրանից ու միջավայրից, ուստի միությունն իր առաջադրանքը դարձնում է աղետի վայրերում օգնության կազմակերպումը: Երկու հիմնական կոմիտեներն իրենց աջակից ենթակոմիտեներով միմյանց միջև են «բաժանում» գործունեության վայրերը: ՀՕԳՄ Ֆրանկֆուրտի կոմիտեն և նրա իրավահաջորդ ԱԷԲԳՕՄ-ը հիմնական կայաններ են հիմնում Մեզիբեում, Մարաշում, Վանում, ավելի ուշ՝ նաև Մուշում ու Հարունիեում: Հիմնվում են նաև մի

շարք ենթակայաններ Կ. Պոլսում, Ամասիայի մոտ, Արաբկիրում, Մալաթիայում, Բալուում և այլուր:

- Սկզբնապես շատ դժվար էր աշխատակիցների ընտրությունն ու կայանների համարումը: Այդ բացը լրացնելու համար Գերմանիայում բացվում են միսիոներական դպրոցներ, վերապատրաստման դասընթացներ, տարվում է ակտիվ քարոզչություն: Աշխատակիցներ են ներգրավվում ոչ միայն Գերմանիայից, այլև Շվեյցարիայից, սկանդինավյան երկրներից, Էստոնիայից, Հունաստանից: 1897 թ. սկսվում է կայանների՝ ելրուպացի կադրերով համայնման գործընթացը: Ֆրանկֆուրտի կոմիտեի առաջին միսիոներները Խարբերդ-Մեզիբեի շրջան են ժամանում 1897 թ. փետրվարին, 1898 թ. սկզբին՝ Մարաշ, 1902 թ. աշնանը՝ Վան: Ավելի ուշ՝ 1907 թ. և 1910 թ. գերմանացիների անմիջական ղեկավարությամբ հիմնական կայաններ են հիմնվում համապատասխանաբար նաև Մուշում և Հարունիեում: Եթե սկզբնապես ՀՕԳՄ-ը կարողացել էր ստանձնել մի քանի հարյուր որբերի ու այլ կարիքավորների խնամքը, ապա ժամանակի ընթացքում կայաններում խնամվող երեխաների թիվը գերազանցում է 2000-ը, իսկ նրանց կողմից կամ օժանդակությամբ հիմնված դպրոցներում սովորող երեխաների թիվը՝ 3350-ը:

- Կայանների առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ աշխատակիցների մեծ մասը կանայք էին, ինչը կապված էր աշխատանքների բնույթի հետ՝ որբախնամ աշխատանք, տնային տնտեսություն, կրթություն, դաստիարակություն, ձեռագործ իրերի արտադրություն և հիվանդախնամ գործ: Ի տարբերություն դրա, որպես կանոն, արևելքում, հաշվի առնելով նաև տեղական բարքերը և կնոջ դերը հասարակությունում, գլխավորապես դավանափոխությանը միտված առաքելությունների անձնակազմը հիմնականում արական սեռի էր լինում:

- Մեզիբեի հաստատությունը վերածվում է կենտրոնական կայանի: Սկզբնապես միությունն ուներ միայն մեկ նպատակ՝ օգնել համիդյան կոտորածների գոհ դարձած հայ ժողովրդին, աջակցության ձեռք մեկնել կենդանի մնացած այրիներին, որբերին ու այլ կարիքավորներին: Նախապես որպես որբանոցներ ծառայող՝ վարձակալությամբ վերցված ոչ այնքան հարմարավետ տները ժամանակի ընթացքում վերափոխվում են հարմարավետ որբանոցների, ստեղծվում են նպաստավոր պայմաններ ինչպես երեխաների ապրելու, այնպես էլ կրթություն ստանալու, բուժվելու, արհեստներ սովորելու համար:

- Կայաններում և դրանցից դուրս ծավալվող աշխատանքները բաժանվում էին մի քանի հիմնական ուղղությունների: Դրանք էին որբախնամությունը, այրիախնամությունն ու ֆիզիկական արատներ ունեցող մարդկանց, մասնավորապես կույրերի խնամքը, կրթական-դաստիարակչական գործունեությունը, արհեստների ուսուցանումը, բժշկական-հիվանդախնամ աշխատանքները, տեղացիներին աշխատանքով ապահովումը և, ի վերջո, ավետարանականացումը:

- Ֆրանկֆուրտի կոմիտեի գործունեության վերոնշյալ ճյուղերից Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում ամենաբարձր գնահատականի են

արժանի որբահավաք ու որբախնամ աշխատանքները: Հայերի համար ծանրագույն ժամանակներում՝ համիդյան կոտորածներից մինչև 1919 թ., կայաններում իրականացվեց շատ մեծ ծավալի աշխատանք՝ հայ երեխաներին պատասպարելու և խնամելու նպատակով: Որբերը կայաններ վերցվում էին խղճուկ վիճակում: Նրանց ընդունելությունը տեղի էր ունենում տարբեր կերպ: Ոմանց հենց աշխատակիցներն էին հավաքագրում փողոցներից, ոմանց մասին նրանց ծանուցում էին իրենց հետ համագործակցող հայերը, իսկ ոմանց պարագայում «ընտրություն» էր կատարվում: Երեխաների ընդունելությունը որբանոցներ մշտական բնույթ է կրել: Վախվորած, կոտորած ու տառապանք տեսած, հարազատներ կորցրած որբերը ժամանակի ընթացքում ձևավորվում էին որպես հասուն մարդիկ, արհեստ կամ ուսում ստանում և, աշխատանք գտնելուց հետո, լքում կայանը՝ հիմնականում պահելով կապը դրա հետ: Երեխաներից շատերը հետագայում շարունակում են աշխատել հենց կայաններում: Հաճախ ամուսնանալուց հետո որբանոցից հեռացող աղջիկներին որոշակի ֆինանսական աջակցություն էր ցուցաբերվում: Երեխաներին խնամել կարողանալու համար ՀՕԳ-ը հովանավորներ կամ խնամառու ծնողներ էր գտնում Եվրոպայում, ովքեր պարտավորվում էին վճարել տարեկան 150 մարկ: Լինում էին դեպքեր, երբ մեկ հոգին ստանձնում էր մի քանիսի խնամակալությունը: Այդպիսի բացառիկ օրինակ է Շառլոտին ֆոն Բարանոֆը, ով ստանձնել էր շուրջ 200 երեխայի խնամակալությունը Մեզիբեում մոտ 20 տարի շարունակ:

• Ավելի բարդ էր այրիների և կույրերի համար խնամակալ գտնելը: Կույրերի ու ֆիզիկական այլ արատներ ունեցողների խնամքն Օսմանյան կայսրությունում մինչ այդ գրեթե չհանդիպող երևույթ էր: Սակայն կույրերը զգալի քիվ էին կազմում տարբեր հայաշատ քաղաքներում, իսկ աչքի «եզիպտական» անվանումը ստացած հիվանդությունը մինչև այդ անբուժելի էր համարվում, որից էլ շատերը տառապում էին: Ամբողջ ընտանիքներ կարող էին կուրանալ կամ տեսողության խնդիրներ ունենալ: Այրիներին կայաններում փորձում էին ներգրավել որոշակի աշխատանքներում՝ լվացք, դերձակություն, մանածագործություն և այլն, իսկ ոմանք հետագայում մասնակցում էին նաև հոգևոր-քարոզչական աշխատանքներին:

• Կրթական-դաստիարակչական աշխատանքները ևս դրված էին բարձր հիմքերի վրա: Կրթական գործն էլ ավելի է կարևորվում նաև այն առումով, որ Օսմանյան կայսրությունում խիստ դժվար էր դպրոց բացելու թույլտվություն ստանալը: Մեկ այլ խնդիր էր ուսուցիչների սակավությունը: Պետք է հատկապես ընդգծել կայանների կողմից կամ նրանց աջակցությամբ գյուղերում տարրական դպրոցներ բացելու կարևորությունը: Ֆրանկֆուրտի կոմիտեի աջակցությամբ ժամանակի ընթացքում կայաններից դուրս տարբեր գյուղերում բացվում են ավելի քան երեք տասնյակ դպրոցներ: Ըստ գերմանացիների՝ տեղացի հայերը որոշ դեպքերում բոլբախս են եղել, և միսիոներների կողմից հիմնադրված դպրոցները ծառայել են վերջիններիս հայերեն ուսուցանելու համար: Եթե կազմակերպության հիմնական կայաններում ուսուցիչների զգալի մասը եվրոպացիներ էին, ապա գյուղական բնակավայրերում կամ ենթակայաններում նրանք գերազանցապես

հայեր էին: Գերմաներենի դասավանդման մակարդակը բարձր էր Մարաշում և Հարունիեում՝ պայմանավորված Բաղդադի երկաթուղուն մոտ լինելու հանգամանքով: Աշխատանքների սկզբնավորումից շուրջ մեկ տասնամյակ անց Մեզիբեում սկսվում է գործել ուսուցիչների պատրաստման սեմինարիա: Այստեղ և Մարաշում աստվածաբանական վարժարաններ հիմնվեցին միայն 1913 թ.: Իր կրթական աշխատանքներով կազմակերպությունը մեծապես նպաստեց որոշ բնակավայրերում կրթական մակարդակի բարձրացմանը, մրցակցություն մտցրեց մինչ այդ առկա դպրոցների միջև՝ խթանելով կրթության զարգացումը: Միաժամանակ կայանները նպաստեցին կնոջ դերի բարձրացմանը՝ կարևոր տեղ հատկացնելով նաև վերջիններիս կրթությանը: Եթե կայաններում կրթվում էին հիմնականում երեխաներ, ապա գյուղերում տարրական կրթություն ստանալու հնարավորություն ունեին նաև ավելի հասուն տարիքի անձինք: Սաներն ամուսնանալուց կամ այլ պատճառով մեկ այլ բնակավայր տեղափոխվելուց հետո հաճախ այնտեղ զբաղվում էին ուսուցչությամբ: Առավել շնորհալի ուսուցիչները վերապատրաստվում էին Գերմանիայում:

• Արհեստագործության խթանումը նույնպես կազմակերպության կարևոր գործառնություններից էր: Ավագ տարիքի երեխաներն արհեստներ էին սովորում, իսկ հետագայում կայանից հեռանալու պարագայում սեփական գործը հիմնելու նպատակով որոշակի ֆինանսական աջակցություն ստանում: Նրանցից ոմանք իրենք էին ավելի ուշ կայաններում արհեստներ ուսուցանում մյուս երեխաներին: Որոշ արհեստների՝ մանածագործության, ասեղնագործության, դերձակության բնագավառներում կայաններն իրենք էին գործատու հանդիսանում՝ կարողանալով աշխատանքով ապահովել հարյուրավոր ընտանիքների: Արհեստագործական արտադրանքների մի մասն իրացվում էր Եվրոպայում:

• Բժշկական-հիվանդախնամ աշխատանքները ևս խիստ բարձր գնահատականի են արժանի: Եվրոպացիների աջակցությամբ բժկությունն Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում բարձրանում է նոր մակարդակի, նվազում է նաև մահացությունը (աչքի հիվանդության պարագայում՝ կուրանալը): Կայաններում ստեղծվում են առանձին հիվանդասենյակներ կամ պոլիկլինիկաներ, իսկ որոշ վայրերում՝ նաև հիվանդանոցներ, որոնք ծառայում էին առավելապես հայերին: Բժշկական գործունեությունը մեծապես նպաստում էր միսիոներների նկատմամբ ազգաբնակչության վստահության աճին: Եվրոպայից հրավիրվում են բարձրակարգ բժիշկներ՝ ղեկավարելու հիվանդանոցները: Մեզիբեի և Մարաշի հիվանդանոցները մեծ հռչակ էին վայելում: Հետագայում այս ոլորտում կադրերի բացը լրացնելու համար դրանց կից հիմնվում են հիվանդապահության ու մանկաբարձության դասընթացներ: Պետք է նշել, սակայն, որ գերմանացի բժիշկները չունեին արտոնյալ կարգավիճակ. նրանք ևս աշխատանքի անցնելուց առաջ Կ. Պոլսում հանձնում էին որակավորման քննություն: Կայաններում աշխատում էին նաև հայ բժիշկներ: Լինում էին նաև կորուստներ, այդ թվում նաև աշխատակիցների շարքերում: Օսմանյան կայսրությունում իրենց գործունեության ընթացքում մահանում են ավելի քան մեկ տասնյակ միսիոներներ՝ հիմնականում հիվանդների հետ շփման արդյունքում

ձեռք բերած զանազան վարակիչ հիվանդություններից կամ գերլարված աշխատանքի արդյունքում հյուծվելուց:

• Ավետարանականացմանն ուղղված աշխատանքները միության ամենախնդրահարույց ճյուղն էին: Պետք է նշել, որ սկզբնապես չկար մեծ գործունեություն, քանզի միակ նպատակը հայերի փրկությունն էր ու պատասխարումը: Նման գաղափարներ առաջ են գալիս փոքր ինչ ավելի ու՝ կայանների զարգացմանն ու ԱԶԲԳՕՍ ընդլայնմանը զուգահեռ: Այն վայրերում, որտեղ մինչ այդ հատկապես ամերիկյան միսիոներներն արդեն որոշակի աշխատանքներ տարել էին ավետարանականացմանն ուղղությամբ, գերմանացիների համար պայման էր քարոզչություն իրականացնելը: Մեկ այլ կարևոր առանձնահատկություն էր այն հանգամանքը, որ միությունը փորձում էր մշտապես լավ հարաբերություններ պահպանել հայ առաքելական եկեղեցու հետ: ԱԶԲԳՕՍ ղեկավարները կայսրություն այցելելիս հանդիպումներ էին ունենում Կ. Պոլսի հայոց պատրիարքի հետ՝ նրանից ստանալով որբախնամ գործունեության համաձայնություն, անգամ՝ աջակցություն: Ժամանակի ընթացքում ավետարանական քարոզչության արդյունքում որոշ վայրերում առաջանում է լարվածություն հայերի հետ հարաբերություններում: Ավետարանականացման քարոզչությունն իր հետ բերում կամ առնվազն ենթադրում էր որոշակի ֆինանսական կամ այլ տեսակի խրախուսում: Սակայն պատահում էին դեպքեր, երբ տվյալ գյուղը կոտորածների կամ երաշտի դժվարությունները հաղթահարելուց հետո վերադառնում էր իր ակունքներին, քանզի նրա բնակիչներն այլևս չունեին այն օգնության կարիքը, որն ունեին տարիներ առաջ, հետևաբար հրաժարվում էին ավետարանականությունից: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ կայաններում գտնվող երեխաների կամ աշխատակիցների կողմից ավետարանականություն ընդունելը եվրոպացիների համար եղել է ցանկալի, բայց ոչ պարտադիր երևույթ կամ նախապայման: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում կայաններում ավետարանականացման շրջանակներն ընդլայնվում են, ինչը որոշ չափով նաև ինքնահոս եկրպով էր տեղի ունենում: Ամեն դեպքում, ավետարանական դարձած անձանցից ոմանք հետագայում կարողացան փրկվել ցեղասպանությունից հենց դրա շնորհիվ: Ավետարանականության տարածումը խթանելու համար մեծ դերակատարում պետք է ունենային 1913 թ. Սեզիբում և Մարաշում հիմնված հոգևոր հաստատությունները՝ «Թաղեուսյան» վարժարանը և Կանանց աստվածաշնչյան դպրոցը, սկայն, այդ հաստատություններին ցեղասպանության պատճառով վիճակված չէր երկար կյանք ունենալ:

• Եթե համիդյան կոտորածներից հետո մինչև Աշխարհամարտն ընկած ժամանակահատվածը հայերին օգնելու, կայաններ հիմնելու, աշխատանքների ընդարձակման և ամրապնդման շրջան էր, ապա պատերազմի տարիներին գոյապահպանության խնդիրը ծառանում էր նաև կայանների առջև: Վերջիններս փորձում էին փրկել և օգնել իրենց սաներին, անձնակազմին, հաճախ՝ նաև մտերիմներին ու նրանց ընտանիքներին: Բնականաբար, դա միշտ չէ, որ հաջողվում էր: Ամենացավալի ճակատագիրն ունենում է Մուշի կայանը, որտեղ երեխաները «սպայի պատվո խոսքով» խլվելով որբանոցից՝ հետագայում

ողջակիզվում են: Այստեղ փրկվում են միայն մի քանի ուսուցչուհիներ, որոնց թուրքերը չէին սպանել՝ պահելով իրենց հարեմների համար: Վանի կայանում մնացած երեխաները նահանջող զորքերի հետ միասին հեռանում են ու հաստատվում Թիֆլիսում, իսկ կայանի աշխատակիցներն այստեղ բանտ են նետվում: Սեզիբեի, Մարաշի և Հարունիեի կայանները, մեծ գրկանքների գնով, կարողանում են կանգուն մնալ ցեղասպանության տարիներին և դիմագրավել Աշխարհամարտի դժվարություններին՝ իրենց հետ կայաններում փրկելով մոտավոր հաշվարկներով 2000-2500 հոգու: Հատկապես Սեզիբեի կայանի շնորհիվ շատերը ձեռք էին բերում նաև դեպի Դերսիմ, այնտեղից էլ՝ ռուսական գոթերի մոտ փախչելու հնարավորություն՝ անգամ փախչելու համար անհրաժեշտ գումարներն ստանալով կայանի ղեկավարից: Բնականաբար, հայկական շրջանակներում ի հայտ են եկել նաև մեղադրանքներ գերմանացի միսիոներների հասցեին՝ լրտեսության, մատնության, թուրքասիրության և այլն, սակայն այդ ամենը պետք է դիտարկել տվյալ ժամանակի և իրադարձությունների համատեքստում: Աշխարհամարտից հետո որբանոցներն ընկնում են ամերիկյան խնամակալության ներքո, քանզի գերմանացիներն ստիպված էին հեռանալ կայսրությունից՝ այնտեղ թողնելով միայն իրենց՝ չեզոք երկրների քաղաքացիություն ունեցող մի քանի ներկայացուցիչների:

Ատենախոսության առանձին հարցեր և հիմնադրույթներ ներկայացված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. «Հայաստանի օգնության գերմանական միության» հիմնումը և առաջին քայլերը Մեզրեում (1897–1908 թթ.), Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2013, 1 (192), էջ 54-63:

2. Գերմանական հայանպաստ միսիոներական կազմակերպությունների մուտքն Օսմանյան կայսրություն, Տարածաշրջանային խնդիրներ, Երևան, ՀՀ Կառավարման ակադեմիա, 2013/1, էջ 121-134:

3. Էռնստ Լոնմանը և գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում, Պատմություն և մշակույթ. հայագիտական հանդես, (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, ԵՊՀ Պատմության ֆակուլտետ, 2013/Բ, էջ 122-132:

4. Գերմանական միսիոներական գործունեության դժվարությունները Մարաշում Աշխարհամարտի տարիներին, Տարածաշրջանային խնդիրներ, գիտական ամսագիր, Երևան, ՀՀ Կառավարման ակադեմիա, 2013/3, էջ 135-151:

5. Օսմանյան կայսրությունում “Deutscher Hilfsbund Für Christliches Liebeswerk im Orient” (“Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության”) միսիոներական կայանների գործունեության դադարեցման դրդապատճառներն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո, Ցեղասպանագիտական հանդես, 2014, տարի 2, N 1, էջ 94-103:

Мартirosян Айк Мурадович

Франкфуртский комитет Немецкого союза помощи Армении и его деятельность в армянонаселённых областях Османской империи в 1896-1919 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- «Всемирная история».

Защита состоится 23-го декабря, 2014 г, в. 15:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

В рамках диссертации исследованы формирование проармянского движения в Германии, основание и раскол Немецкого союза помощи Армении (НСПА), работу созданных Франкфуртским комитетом НСПА и его правопреемником Союзом немецкой помощи христианской благотворительности на Востоке (СНПХБнВ) основных станций в армянонаселённых районах Османской империи – с начала их деятельности до выдворения немецких работников в 1919 году.

Диссертация состоит из введения, трёх глав, заключения, списка использованной литературы и приложения.

В первой главе (“Зарождение проармянского движения в Германии. Создание Немецкого союза помощи Армении и его раскол”) представлены немецко-турецкие отношения в конце 19-ого и в начале 20-ого века, политическая, военная и экономическая экспансия Германии в Османской империи, распространение в Германии с конца 1895 года первых сведений о Гамидовских погромах, говорится о некоторых периодических изданиях и индивидах, которые имели большой вклад в распространении правдивой информации о погромах и формировании проармянского движения. Приводится также первый в Германии призыв о помощи армянам, сделанный соучредителем НСПА и руководителем Франкфуртского комитета НСПА Эрнстом Ломаном и отсылки на этот призыв.

Рассматриваются также создание летом 1896 года НСПА, его структура, две основные комитеты и подкомитеты, деятельность, а также раскол и

создание на основе Франкфуртского комитета и являющегося его правопреемником СНПХБнВ и его дальнейшая деятельность. СНПХБнВ сотрудничал как с немецкими, так и американскими, швейцарскими и скандинавскими миссиями, о чём также можно найти сведения в первой главе.

Во второй главе (“Работы союза в Османской империи до Первой мировой войны”) представлено начало деятельности Франкфуртского комитета НСПА. Здесь описаны деятельность основанных со временем пяти основных станций – в Мезире, Мараше, Ване, Муше и Харуние, ход их работ. Описываются также направления деятельности каждой из станций – забота о сиротах и вдовах, просветительская работа, преподавание ремесел, медицинская помощь и евангелизация. Со временем многократно увеличивается число детей, содержащихся в сиротских приютах, поднимается уровень образования в основанных Союзом немецкой помощи христианской благотворительности на Востоке или при его содействии школах, как при станциях, так и в различных сельских школах. До Первой мировой войны в станциях происходит ряд знаменательных событий, как например, основание в Мезире семинарии по подготовке учителей и открытие больницы “Ефрат-силоа”, открытие в 1913 году теологического колледжа “Тадеусян”, основание в Мараше имевшую большую известность больницы “Салем”, открытие в 1913 году Женской библейской школы и т.д.

В третьей главе (“Станции СНПХБнВ в 1914-1919 гг. Прекращение деятельности союза в Османской империи”) приведён как общий характер трудностей в деятельности станций, так и описывается деятельность каждой из станций в период с 1914 по 1919 гг.

Станции Мезире, Мараша и Харуние смогли противостоять сложностям и продолжить деятельность после Первой мировой войны и спасти порядка 2000 - 2500 армян, в то время, как станции Муша и Вана прекратили свою деятельность. Работники и дети станции Вана были переведены в Тифлис. Европейские работники станции на некоторое время были заключены в тюрьму и освобождены только после американского дипломатического содействия. Самой жестокой была судьба станции Муша: почти всех детей и сотрудников (за исключением нескольких армянских учительниц и двух европейских сотрудниц) турки убили, преимущественно путём сожжения живьём.

В 1919 году немцы, как подданные проигравшей страны, вынуждены были, по требованию Франции и Великобритании, покинуть Османскую империю. Ещё действующие станции перешли под управление американской миссионерской организации. Для успешного осуществления этого перехода на

местах остались представители этих станций. Таким образом закончился османский период деятельности СНПХБнВ.

Резюмируя результаты, отметим, что Франкфуртский комитет НСПА и люди, стоящие у его истоков, сыграли важную роль в зарождении и развитии проармянского движения в Германии. Действующие в Османской империи пять основных и множество неосновных станций стали оазисами спасения для армянских детей и в ряде случаев и армянских вдов с 1896 по 1919 гг.

Hayk M. Martirosyan

The Frankfurt Committee of German Relief Union for Armenia and Its Activities in the Armenian Populated Territories of the Ottoman Empire (1896-1919)

The defense of the dissertation will take place at 15:00, on 23th of December of 2014, the meeting of the Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of the NAS RA.

Address: Yerevan, 0019, M. Baghramyan Ave., 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02

SUMMARY

Within the scope of this research the following topics have been studied: the formation of the pro-Armenian movement in Germany, the establishment and separation of the German Relief Union for Armenia (GRUA) (Deutscher Hilfsbund für Armenien), the activities of the main stations (established by the Frankfurt Committee and the Union of Christian Charitable German Relief in the Orient (UCCGRO) (Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient) that was the descendant of the GRUA) in the Armenian populated territories of the Ottoman Empire from their first steps until the deportation of the German staff in 1919.

The dissertation consists of introduction, three chapters, conclusion, references and appendix.

The first chapter (“Initiation of the pro-Armenian movement in Germany. The formation and separation of the GRUA.”) discusses the German-Turkish relations at the end of the 19th and the begin of the 20th century, the German intervention in the political, economic and military life of the Ottoman Empire, the permeation of the first news of Hamidian massacres to Germany.

The chapter also reveals several periodicals and individuals having significant contribution in circulating accurate information on the massacres and initiating pro-Armenian activities. The first call by Ernst Lohmann (cofounder of GRUA and the director of Frankfurt Committee) to help Armenians in Germany and reactions to the call are also presented here.

The first chapter also considers the formation of the GRUA in the summer of 1896, its structure, the two main committees and subcommittees, the course of its

operation, as well as its separation, the formation of UCCGRO (that was based on Frankfurt Committee and was its descendant) and its further activities. The latter had cooperated with German as well as American, Swiss and Scandinavian missions, which is also discussed in the chapter.

The second chapter (“The activities of the Union in the Ottoman Empire until World War I.”) describes the origination of activities of the Frankfurt Committee of GRUA in the Ottoman Empire. It also focuses on the course of activities of each of the five main stations of Mezire, Marash, Van, Moush and Harunie, the activities of each branch in the stations, namely orphan care, widow care, education, studies on crafts, medicine and evangelization.

During the course of the time the number of children in the orphanages increased for several times, the level of teaching quality also rose in the stations (established by or with the help of the Union of Christian Charitable German Relief in the Orient) as well as in different school villages. By the World War I several significant events took place in the stations. For example, the establishment of teachers’ training seminary in Mezire and “Ephrat-siloah” hospital, the opening of “Tadeussian” Theological College in 1913, “Salem” hospital that gained wide recognition in Marash and the launching of the Holy Bible School of Women in 1913, etc.

In the third chapter (“The stations of the UCCGRO from 1914 to 1919. The termination of the operations of the Union in the Ottoman Empire.”) the difficulties faced by the stations and by the UCCGRO are described in general, as well as the activities of each station from 1914 to 1919.

It is worth mentioning that the stations of Mezire, Marash and Harunie could overcome the difficulties and survive after the World War I. They could manage to save the lives of approximately 2000-2500 Armenians, whereas the stations of Van and Mush stopped their operations. The staff and children of Van station moved to Tiflis, whereas the European staff was imprisoned for some period and later released with the help of US diplomatic mission.

The station of Mush had the most severe experience. Almost all the children and staff of the station were killed by Turks mostly by being burnt alive (except for a few Armenian female teachers and two European staff members).

In 1919 Germans as subordinates of a defeated country had to leave the Ottoman Empire by the demand of France and Great Britain. The function of the stations was transferred to the American missionary organizations. Some representatives of the stations were temporarily left in the stations for the smooth

transition of the stations. Thus, the UCCGRO came to its end in the Ottoman Empire.

In conclusion I would like to mention that the Frankfurt Committee of GRUA and the individuals playing huge role in its establishment were the key players of initiating and developing the pro-Armenian movement in Germany. The five main stations in the Ottoman Empire as well as many substations played a crucial role in saving the lives of thousands of Armenian orphans and widows, providing them with food and shelter as well as taking care of them from 1896 to 1919.

A handwritten signature in black ink, appearing to be 'A. Z.', located below the main text.